Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2013թ. մայիսի 24 -ի թիվ 10/1 որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին

2012 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել է 911,640,624.5 հազ. դրամ: 2012 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 33,273,948.30 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 944,914,572.8 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 11 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2012 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը ճշտված ծրագրով կազմել է 28,570,703.1 հազ. դրամ, որից՝ 27,023,720.5 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն են, 1,546,982.6 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր չեն նախատեսվել: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտքը կազմել է 26,398,571.80 հազ. դրամի գումար, որից՝ 25,677,988.6 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 727,633.1 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ 7,049.9 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել է 920,515,356.3 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի (առանց

արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 100.3%, իսկ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել է 946,193,344.9 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 103.8%-ը, ճշտված ծրագրի՝ 100.1%-ը: 2012 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի (3,981,506,500.0 հազ. դրամ) նկատմամբ կազմել են 23.8% (2011թ.՝ 23.3%):

Օրենքով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 1,044,179,624.5 հազ. դրամ, 2012 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով, ավելացել է 32,971,517.8 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 28,491,976.9 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը) կազմել է 1,077,151,142.3 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսի) կազմել է 1,048,659,165.4 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 23,696,694.0 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,006,102,185.4 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 96.4%-ը, ճշտված ծրագրի՝ 93.4%-ը: 2012 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.3% (2011թ.՝ 26.1%):

Օրենքով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 132,539,000.0 հազ. դրամ: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախատեսված պակասուրդը տարվա ընթացքում նվազել է 302,430.5 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 132,236,569.5 հազ. դրամ: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 59,908,840.5 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 45.2%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ նախատեսվածի 45.3%-ը: ՀՆԱ-ի նկատմամբ 2012 թվականի պակասուրդը կազմում է 1.5% (2011թ.՝ 2.8%):

2002-2012 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներում կատարված վերլուծությամբ առկա է ՀՀ կառավարությանը փոխանցված լիազորությունների ընդլայնում, որով 2012 թվականին ՀՀ կառավարությունը լիազորվել է լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

2012 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2012 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 946,193,344.9 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները), 2012 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2011 թվականի համեմատ աճել են 65,342,353.6 հազ. դրամով կամ 7.4%-ով: 2012 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 23.8%, 2011

թվականի 23.3%-ի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 0.5% տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2012 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները և պետական տուրքը կազմել են 79.2%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 81.2%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ համապատասխանաբար՝ 13.6% և 14.0%, պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար՝ 2.0% և 1.8% և այլ եկամուտները՝ համապատասխանաբար՝ 5.2% և 2.9%:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) Օրենքով նախատեսված 711,629,524.0 հազ. դրամից ավելի է մուտքագրվել 13,867,267.2 հազ. դրամով, կամ 1.95%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 725,496,791.2 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 99.7% կատարում: 2012 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 18.22%, նախորդ տարվա 16.72%-ի համեմատ:

Հաշվետվությունում բացակայում է հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնել: Օրենքում հարկային եկամուտներից նախատեսվել է միայն երկու եկամտատեսակների՝ Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ և ռոյալթի եկամտատեսակներով: Ռոյալթի եկամտատեսակներով նախատեսվել էր մուտքեր 15.0 մլրդ դրամ: Սակայն, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև զուգահեռաբար «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում 2012 թվականի հունվարից ուժի մեջ մտած փոփոխություններով պայմանավորված հանքարդյունահանողների կողմից նախկինում պետական բյուջե վճարվող բոնուսի, կոնցեսիոն վճարի, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար վճարվող բնօգտագործման վճարների և ռոյալթիների փոխարեն սահմանվել են ռոյալթիներ՝ որպես բնօգտագործման վճարներ: 2012 թվականի ընթացքում ռոյալթիների մուտքերը փաստացի կազմել է 15.7 մլրդ դրամ՝ կանխատեսված 15 մլրդ դրամի դիմաց և Հաշվետվությունում ներկայացվել է բնապահպանական և բնօգտագործման վճարներում: Պետք է նշել, որ Օրենքում հարկային եկամուտների այս եկամտատեսակի մեծությունը չի պլանավորվում և որի արդյունքում Հաշվետվությունում բացակայում է այս հարկային եկամտատեսակի ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնել: Այսինքն, եթե մինչ օրենքների փոփոխությունը ռոյալթիները պլանավորվում առանձին խմբով, կատարողականին վերաբերող տվյալները հնարավորություն էին ընձեռում վերլուծություն իրականացնել այդ եկամտատեսակի գծով, ապա ներկայումս այդ

հնարավորությունը բացակայում է: Բացի այդ Հաշվետվությունում հանքարդյունաբերող լիցենզառուի կողմից վճարվող ռոյալթիների հաշվի վերաձևակերպման արդյունքում կատարողականը կազմել է -1%:

2012 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 23,825,997.3 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի և Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 115.5% և 112.4%: 2012 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.5%-ը:

2012 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները Օրենքով նախատեսվել են 142,058,000.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 129,058,595.1 հազ. դրամ և փաստացի ցուցանիշը կազմել է 129,058,595.5 հազ. դրամ, կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի նկատմամբ կատարվել է 90.8%-ով, ճշտված ծրագրի նկատմամբ՝ 100.0%-ով: 2012 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են փաստացի եկամուտների 13.6%-ը:

2012 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 16,309,350.0հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 22,713,496.5 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 18,674,636.9 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի և ճշտված ծրագրի համապատասխանաբար՝ 114.5%-ը և 82.2%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 16,863,645.7 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 103.4%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 82.9%: 2012 թվականին պաշտոնական տրանսֆերտները կազմել են փաստացի եկամուտների 2%-ը:

2012 թվականին պետական բյուջեի «այլ եկամուտները» Օրենքով նախատեսվել են 21,012,482.5 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 44,131,629.0 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 49,137,324.0 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի՝ 233.8%-ը, ճշտված ծրագրի՝ 111.3%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 26,980,767.6 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 128.4%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 128.3%: 2012 թվականին «այլ եկամուտները» կազմել է փաստացի եկամուտների 5.2%-ը:

Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2012 թվականի ընթացքում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահաբաժին են վճարել 943,023.7 հազ. դրամի, նախատեսված 868,579.7 հազ. դրամի փոխարեն կամ կատարվել է 108.6%-ով: Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության

վերահսկողության դաշտում է գտնվում պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող 376 ընկերություն, և մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող 11 ընկերություն:

2012 թվականի ընթացքում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից նախատեսվել էր ստանալ 885.000.0 հազ. դրամ, սակայն փաստացի ստացվել է 5,258,806.5 հազ. դրամ և կատարողականը կազմել է 594.2%, որից՝ տոկոսավճարները մոտ 5 անգամ կամ 494.2%-ով գերազանցել են ծրագրված ցուցանիշը: Պետք է նշել, որ այս եկամտատեսակի գծով պլանի ճշտում չի կատարվել, որն էլ մասնավորապես նպաստել է ընդհամենը եկամուտների 100.1% կատարմանը:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի թիվ 48 որոշման 68 կետը, ըստ որի՝ «Գանձապետական ծախսային հաշիվների և բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների դրամարկղներում առկա մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցվում են հաջորդ տարվա բյուջեի ազատ մնացորդի գանձապետական եկամտային հաշվին»: Վերլուծությունը ցույց է տվել, որ 2012 թվականին գանձապետական ծախսային հաշիվների և բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների դրամարկղներում առկա մնացորդը՝ 3,896,322.6 հազ. դրամը (որից՝ 2,984,353.9 հազ. դրամ գանձապետական ծախսային հաշիվների և բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների դրամարկղներում առկա մնացորդն է 30.12.2011թ. դրությամբ, իսկ 911,968.6 հազ. դրամը՝ 31.12.2012թ. դրությամբ), բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին չի փոխանցվել ազատ մնացորդի գանձապետական եկամտային 900005055059 հաշվին:

2012 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 23,696,694.0 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,006,102,185.4 հազ. դրամ, որը կազմում է ճշտված ծրագրի՝ 93.4%-ը:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծրագրերի ***(գործառնական դասակարգմամբ)*** կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով յոթ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է 1,174,959.5 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,
2. թվով երեք ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը Օրենքով նախատեսվել է 177,600.0 հազ. դրամ ճշտված ծրագրով զրոյացվել են,

3. թվով տասնվեց ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 22,382,823.3 հազ. դրամ. ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 2,814,125.5 հազ. դրամի չափով, ինչը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերով և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերով:
4. թվով քառասումեկ ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 23-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 43,203,096.3 հազ. դրամ, մինչդեռ, փաստացի կատարողականը կազմել է 5,870,681.9 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 13.6%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում փաստացի ցուցանիշի ամենամեծ բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2)» ծրագրում՝ 19,751,817.87 հազ. դրամ,
5. թվով հիսուներկու ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն, ճշտված ծրագրով նախատեսվել են 33,189,410.4 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 27,522,513.5 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 82.9%-ով: Այդ հիսուներկու ծրագրերից քսանյոթը դրամաշնորհային ծրագրեր են (ներառյալ արտաբյուջետային դրամաշնորհային ծրագրերը), որոնց փաստացի ծախսը կազմել է 3,074,882.5 հազ. դրամ,
6. 2012 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 29.0%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 16.0%, պաշտպանություն՝ 15.2%, կրթություն՝ 10.2%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 7.6%, տնտեսական հարաբերություններ՝ 7.1%, առողջապահություն՝ 6.4%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 4.2%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 2.3%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 1.4%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.7%:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններից ինչում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Տնտեսական հարաբերություններ» բաժնում՝ 66.1%:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը ***(տնտեսագիտական դասակարգմամբ)*** հետևյալն է. 87.0%-ն ուղղվել է

ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 13.0%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն են:

2011 թվականի համեմատ, 2012 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 2.0%-ով: 2012 թվականին ծախսերը Օրենքով նախատեսվել է 1,044,179,624.5 հազ. դրամ: 2012 թվականին փաստացի ծախսերը կազմել է 1,006,102,185.4 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 96.4%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 93.4%-ով:

2012 թվականին պետական բյուջեից 28.7%-ը կամ 288,532,093.9 հազ. դրամը տրամադրվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, 20.3%-ը կամ 204,667,368.5 հազ. դրամը՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը, 12.1%-ը կամ 121,623,784.7 հազ. դրամը՝ այլ ծախսերին, 11.2%-ը կամ 112,768,071.1 հազ. դրամը՝ դրամաշնորհներին, 4.0%-ը տոկոսավճարներին, իսկ 2.1%-ը՝ սուբսիդիաներին:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 112,768,071.1 հազ. դրամի դրամաշնորհներ, որից՝ 104,964,120.8 հազ. դրամը պետական հատվածի այլ մակարդակներին հատկացված ընթացիկ դրամաշնորհներն են (ընդամենը դրամաշնորհների 93.1%-ը), 6,169,548.1 հազ. դրամը (ընդամենը դրամաշնորհների 5.5%-ը) կապիտալ դրամաշնորհներն են, հատկացված պետական հատվածի այլ մակարդակներին, 1,634,402.2 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 1.4%-ը) հատկացվել են միջազգային կազմակերպություններին:

Ընթացիկ դրամաշնորհներից 32,435,529.7 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 21,200,232.0 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել է 31,983,803.3 հազ. դրամ:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 288,532,093.9 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որից 68.3%-ը միայն կենսաթոշակներն են:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է 121,623,784.7 հազ. դրամ, որից 96.3%-ը կամ 117,104,831.5 հազ. դրամը՝ այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2012 թվականին Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը Օրենքով նախատեսվել է 148,412,021.2 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում ավելացվել է 30,019,731.6 հազ. դրամով և ճշտված ծրագրով կազմել է 178,431,752.8 հազ. դրամ: Փաստը կազմել է 133,189,993.8 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 30,019,731.6 հազ. դրամով և 8,295.8 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է 178,431,752.8 հազ. դրամ և 1,779,818.7 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են 133,189,993.8 հազ. դրամ և 2,679,593.2 հազ. դրամ:

ՀՀ 2012 թվականին պետական բյուջեի ծախսերի ***(գերատեսչական դասակարգմամբ)*** վերլուծությունից պարզվել է, որ ընդամենը փաստացի ծախսերից 59.3%-ը բաժին է ընկնում հինգ գերատեսչություններին: Օրինակ՝

1. ՀՀ 2012 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 21.9%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 222,090,631.6 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 222,278,503.0 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 220,761,990.4 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 99.3%-ը: 2012 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2011 թվականի համեմատ աճել է 8.11%-ով:

2. 2012 թվականին փաստացի ընդամենը ծախսերի մեջ երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին ընկնում ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ 15.1% կամ 151,583,935.9 հազ. դրամ, որը Օրենքով նախատեսվել է 150,982,211.5 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 98.8%-ով:

3. 2012 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 10.5%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 113,111,293.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 111,848,181.2 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 105,212,309.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի՝ 93.0%-ը, ճշտված ծրագրի՝ 94.1%-ը:

4. 2012 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի 6.4%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 65,185,536.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 67,390,283.9 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել է 64,849,228.7 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 96.2%-ը: 2012 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2011 թվականի համեմատ աճել է 1.75%-ով:

5. 2012 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 5.4%-ը բաժին է ընկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 59,981,858.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով 55,693,722.3 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 54,643,720.0 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 98.1%-ը: 2012 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2011 թվականի համեմատ աճել է 6.7%-ով:

2012 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողական է արձանագրվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն գերատեսչությունում, այսպես՝ Օրենքով «Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր» ծրագրով նախատեսվել է 36,922.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 45,218.7 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 589,899.95 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 1,304.5%-ը, և քանի որ այս ցուցանիշը բացասական է արտահայտված ծախսերի մեջ, ապա այն արդյունք է հանդիսացել տվյալ գերատեսչության ցածր կատարողականի:

Ըստ Հաշվետվության, 2012 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 23,696,694.0 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 83.2%:

2012 թվականին արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություն՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 65.0%-ը,
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 18.4%-ը,
3. ՀՀ առողջապահության նախարարություն՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 8.2%-ը:

2012 թվականին ՀՀ կառավարության պահուտային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 23,949,624.4 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 24,647,899.9 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 48,597,524.3 հազ. դրամ: 2012 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 41,919,728.8 հազ. դրամ: 2012 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 50.8%-ը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով կատարված ծախսերը:

2012 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 365,432,588.2 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի գնումների), սակայն փաստացի վճարվել է 358,194,390.1 հազ. դրամ:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ ա) Հաշվետվությունը պետք է ներառի գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գերատեսչությունների գործարքների (ընտրանքային) բ) անհրաժեշտ է սահմանել պետական

հսկիչ գներ: ՀՀ կառավարությունը 2013 թվականի ապրիլի 18-ին ընդունել է «Պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը առավելագույն գները հաստատելու մասին» N 441-Ն որոշումը, բացի այդ աշխատանքներ են տարվում ՀՀ վերահսկիչ պալատին «CLIENT-TREASURY» ծրագրային համակարգի տվյալների հենքին միանալու ուղությամբ, որը հնարավորություն կտա ունենալ, տեսնել գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գերատեսչությունների գործարքների: Վերահսկիչ պալատի կարծիքով, պետք է շարունակել գնումների գործընթացի կատարելագործումը:

Հաշվետվությունում բացակայում է Օրենքի N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ ԿԲ) 2012 թվականի վարչական ծախսերի կատարման մասին տեղեկատվեթյունը, որի բացակայությունը Վերահսկիչ պալատին հնարավորություն չի տալիս գնահատել հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված բոլոր պահանջները, այսինքն՝ հնարավոր չի գնահատել Օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կատարումը:

2012 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2012 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 59,908,840.5 հազ. դրամ `2011 թվականի համեմատ, 2012 թվականին պակասուրդի մեծությունը նվազել է 43.3 տոկոսային կետով, որը պակասուրդի ֆինանսավորման և արտաքին, և ներքին աղբյուրների նվազման արդյունք է:

2012 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 132,539,000.0 հազ. դրամով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը նվազեցրել է 302,430.6 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 132,236,569.5 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 45.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 45.3%:

2012 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 72,810,886.8 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը նվազեցվել է 34,107,130.6 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 38,703,756.3 հազ. դրամ: Փաստացի այդ ցուցանիշը կազմել է 5,850,269.2 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 8.0%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 15.1%:

Հարկ ենք համարում նշել, որ պետական ընդհանուր ռեսուրսները 2012 թվականին ավելացել են 2012 թվականի նկատմամբ 28,418.9 մլն դրամով, այսինքն՝ առկա է պետական ընդհանուր ռեսուրսների աճման միտում:

Համաձայն Հաշվետվության, 2012 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 31,504.4 մլն դրամ, այդ թվում՝ 19,449.7 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, *որից* ՝

(8,589.2) մլն դրամ՝ Կետրոնական գանձապետարանում դեպոզիտի փոփոխություն,

(1,616.3) մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

1,925.1 մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,

(619.3) մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

(69.4) մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,

28,418.9 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

0.0 մլն դրամ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

28,418.9 մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոփություն, այդ թվում՝ 945.9 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

(658.7) մլն դրամ՝ հաշվետու ժամանակաշրջանում տարեսկզբի ազատ մնացորդին մուտք,

(60.1) մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների տարեսկզբի մնացորդից օգտագործում,

2,597.8 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների միջոցների փոփոխություն, նախատեսված 2,152.3 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2012 թվականի տարեսկզբի պետական ընդհանուր ռեսուրսները կազմել են 53,592.4 մլն դրամ:

2012 թվականին Օրենքով նախատեսվել է Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստանալ 123,190,537.0 հազ. դրամ արտաքին վարկ, սակայն տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 156,960,235.8 հազ. դրամ: 2012 թվականին արտաքին վարկերի և փոխատվությունների ստացումը փաստացի կազմել է 116,548,094.2 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 74.3%-ը:

2012 թվականին Օրենքով արտաքին վարկերի մասով նախատեսվել է մարել 26,903,507.3 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 27,483,507.3 հազ. դրամ, փաստացի մարվել է 27,264,510.8 հազ. դրամ: Կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 99.2%:

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին բյուջետային վարկերի տրամադրումը տնտեսավարող սուբյեկտներին կազմել է 125,586.9 մլն դրամ: 2009-2012 թվականների ընթացքում Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձը կազմել է 37,295.6 մլն դրամ:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման (տոկոսավճար) ընդհանուր գումարի 97.1%-ը, ամբողջությամբ իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված 05.01.2007թ. «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261 պայմանագրին, և որպես այդ պայմանագրի լրացումներ 01.09.2009թ., 20.05.2010թ. և 2011թ. օգոստոսին կնքված համաձայնագրերինին համապատասխան: Այսպես, սպասարկման ընդհանուր գումարի 73%-ը իրականացվել է ՀՀ 2012թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ամրագրված ֆիքսված փոխարժեքով (2012թ.-ի համար՝ 1 ԱՄՆ դոլար = 378.96 ՀՀ դրամ), 16.2%-ը՝ 1 ԱՄՆ դոլար = 370.17 ՀՀ դրամ փոխարժեքով (Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի սպասարկման 39.98163%-ը՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև 2011թ. օգոստոսին ստորագրված համաձայնագրի) և 7.9%-ը կազմել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից տրամադրված վարկի սպասարկման գումարը, որը փոխարկվել է վճարման օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված SDR-ի փոխարժեքով (համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև 20.05.2010թ. ստորագրված համաձայնագրի): ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման մնացած 2.6%-ը կազմել են Ասիական Զարգացման Բանկի, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի, Եվրամիության կողմից տրամադրված վարկերի սպսարկման գծով վճարման ենթակա գումարները, որոնք, համապատասխան վարկային համաձայնագրերով սահմանված ընթացակարգի համաձայն, գանձվել են վարկային միջոցների հաշվին և միաժամանակ դիտարկվել են նաև որպես վարկային միջոցներից մասհանում: Այդ գումարների փոխարկումը կատարվել է հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ արժութային շուկայում ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին փոխարժեքները՝ ՀՀ պետական բյուջեի մուտքերը և ելքերը հավասարակշռելու նպատակով: Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի սպասարկումը, կազմել է ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի սպասարկման 42.1%-ը:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր

կատարվում, և ՀՀ կառավարությունը 2010 թվականի մարտի 25-ին ընդունել է թիվ 324՝ «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառման կարգը հաստատելու մասին» որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառումը պետք է կատարվի գանձապետական միասնական հաշվով, սահմանելով, որ սպասարկման շրջանակներում գանձապետարանը նախնական հսկողություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չի իրականացնում: 2010 թվականի ընթացքում գանձապետական միասնական հաշիվ է տեղափոխվել Համաշխարհային բանկի տասնմեկ ԾԻԳ-երի հաշիվները, 2011 թվականին ևս հինգ ԾԻԳ-երի հաշիվները, իսկ 2012 թվականին արդեն բոլոր ԾԻԳ-երի հաշիվները գտնվում են գանձապետական միասնական հաշվում, որոնց մնացորդը 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 6,255.4 մլն դրամ:

Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ՝

1. Գանձապետարանը ԾԻԳ-երի հաշիվների նկատմամբ իրականացնի նախնական հսկողություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև ««Գերմանահայկական հինադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

2012 թվականի ՀՀ պետական պարտքը

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,369.3 մլն ԱՄՆ դոլար (1,763.4 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,738.3 մլն ԱՄՆ դոլար (1,508.7 մլրդ դրամ), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 631.0 մլն ԱՄՆ դոլար (254.7 մլրդ դրամ): 2012 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 85.6%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 14.4%, այսինքն՝ 2011 թվականի համեմատ, 2012 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 0.9 տոկոսային կետով:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 60%-ը»: 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2011 թվականի ՀՆԱ-ի 46.7%, մինչդեռ 2011 թվականին այդ ցուցանիշը կազմել է 46.0%: Երկու դեպքում էլ պահպանվել է օրենքի այդ կետի պահանջը:

2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,738.3 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 3,143.7 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության պարտավորությունն է, իսկ 594.6 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) պարտավորությունը: 2012 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը, 2011 թվականի համեմատ, աճել է 132.2 մլրդ դրամով (170.1 մլն ԱՄՆ դոլար) կամ 4.8%-ով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու դեպքում) ՀՀ արտաքին պետական պարտքը «պիկին» կհասնի 2015 թվականին՝ 3,899.0 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները (մասհանումներ) կազմել է 386.0 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ կառավարությունը ստացել է 295.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԿԲ-ն՝ 90.8 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով ստացումները 2012 թվականին 2011 թվականի համամատ ավելացել է 23.8%-ով:

ՀՀ կառավարությունը, Ըստ Օրենքի, նախատեսել է ստանալ 325.1 մլն դոլարի արտաքին վարկեր, որից՝ ոչ նպատակային վարկեր 85.0 մլն դոլար կամ ընդհանուրի 26.1 %-ը, իսկ նպատակային վարկեր 240.1 մլն դրամ կամ ընդհանուրի 73.9 %-ը: Փաստացի արտաքին վարկեր ստացվել է 295.2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 173.7 մլն ԱՄՆ դոլարը ոչ նպատակային վարկերն են, այսինքն՝ երկու անգամ ավելին քան նախատեսվել էր: Ստացված ոչ նպատակային վարկերը կազմել են է ստացվածի արտաքին վարկ 58.8 %-ը, այսինքն՝ 2012 թվականի ընթացքում այդ գումարները մուտքագրվել են ընդհանուր պետական ռեսուրսներ և բյուջետային տարվա ընթացքում ուղղվել են բյուջետային ծախսեր կատարելուն, դեֆիցիտի ֆինանսավորմանը: 2012 թվականին 2011 թվականի համամատ ՀՀ կառավարությունը 1.5 անգան ավելի ոչ նպատակային վարկեր է ստացել: Հայաստանի Հանրապետությունը 2012 թվականին ստացել է 121.57 մլն ԱՄՆ դոլարի նպատակային վարկեր:

2012 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 37.7% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը, չորս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր, մեկ ցուցանիշով միջին պարտքի բեռ ունեցող (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ	
		2011	2012
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 80% և ավելի		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 48%	29.8%	34.4%
ԶՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 220% և ավելի		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 132%	125.6%	136.8%
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահա-նում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 25.9%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 23.45%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 7.8%	4.2%	9.6%
Տոկոսավճար /Արտահա-նում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 11.65%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 9.85%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 3.6%	2.1%	2.2%
Արտաքին պետական պարտք/Ար-տահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 387.95%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 209.00%	148.2%	150.1%

	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 64.00%		
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման 50.00%	35.2%	37.7%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ		4.3%	10.2%

Համաձայն 2011 թվականի նկատմամբ 2012 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության գործոնային վերլուծության արդյունքների հաշվետու տարում տրամադրված արտաքին վարկերի արտարժույթի և ԱՄՆ դոլարի փոփոխության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է բացասական 32.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ տրամադրված արտաքին վարկի ստացման և մարման գումարների տարբերության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 202.5 մլն ԱՄՆ դոլար:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները (մասհանումներ) կազմել է 386.064 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ կառավարությունը ստացել է 295.260 մլն ԱՄՆ դոլար (116,548.132 մլն դրամ), իսկ ԿԲ-ն՝ 90.804 մլն ԱՄՆ դոլար: 2012 թվականին ստացված արտաքին վարկերի 44.5%-ը ոչ արտոնյալ վարկերն են:

2012 թվականին արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ կազմել է 55.5%: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2010, 2011 և 2012 թվականների ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ առկա է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի նվազում: 2009 թվականի համեմատ 2010 թվականին արտոնյալ վարկերը նվազել են 3.9 տոկոսային կետով, 2011 թվականին 2010 թվականի համեմատ՝ 3.3 տոկոսային կետով, իսկ 2012 թվականին 2011 թվականի համեմատ՝ 2.1 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության ստացած 295.260 մլն ԱՄՆ դոլար (116,548.132 մլն ՀՀ դրամ) արտաքին վարկերի՝

- 173,688.3 մլն ԱՄՆ դոլարը (67,217,1 մլն ՀՀ դրամ) կամ 58.8%-ը չորս միջազգային կազմակերպությունների (IMF, IBRD, IDA, EU) կողմից դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող չորս ծրագրերի հանրագումարն է:

- 121.571 մլն ԱՄՆ դոլարը (49,331.0 մլն ՀՀ դրամ) կամ 41.2%-ը ստացվել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու օտարերկրյա պետություններից, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով, ըստ ծրագրերի և վարկատուների:

2012 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի մարման և սպասարկման ծախսը կազմել է 239.429 մլն ԱՄՆ դոլար (55.008 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 184.421 մլն ԱՄՆ դոլար մարում), որից՝ ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը կազմել է 114.827 մլն ԱՄՆ դոլար ((44,692.438 մլն ՀՀ դրամ) 45.931 մլն ԱՄՆ դոլարը (17,427.927 մլն ՀՀ դրամ) տոկոսավճարներ և 68.895 մլն ԱՄՆ դոլարը (27,264.510 մլն ՀՀ դրամ)՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 124.603 մլն ԱՄՆ դոլար (9.077 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 115.526 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում):

2012 թվականին վճարված 45.931 մլն ԱՄՆ դոլար (17,427.927 մլն ՀՀ դրամ) ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներից 19.127 մլն ԱՄՆ դոլարը (7,181.170 մլն ՀՀ դրամ) կամ 41.2%-ը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) վարկի համար տրված տոկոսավճարներն են:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2013 թվականին ՀՀ արտաքին վարկերը մարելու և տոկոսավճարները իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 419.769 մլն ԱՄՆ դոլար, կամ 1.75 անգամ ավելի, քան 2012 թվականին, որից՝ ՀՀ կառավարությանը արտաքին վարկերը մարելու և տոկոսավճարները իրականացնելու համար 2013 թվականին անհրաժեշտ կլինի 222.383 մլն ԱՄՆ դոլար, կամ 1.9 անգամ ավելի, քան 2012 թվականին:

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: